ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 մայիսի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

67
(2733)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԶԲԱՂՎԱԾ ԵՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ հայրենի իշխանությունները՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ լծվել են ակադեմիական քաղաքը կյանքի կոչելու գործին: Ըստ այդմ, Արայիկ Հարությունյանը ներքին կարգով նամակներ է ուղարկել Հայաստանում գործող բոլոր կրթական հաստատություններին, որպեսզի վերջիններս որոշ ժամանակով դադարեցնեն այժմ իրականացվող մի քանի ծրագրերը եւ զբաղվեն ակադեմիական քաղաքի աշխատանքներով: Այսինքն՝ իշխանությունների գերնպատակն այս պահին կրթության ոլորտում ակադեմիական քաղաքի ստեղծումն է: Ստացվում է, որ Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ՝կրթական ոլորտում կյանքը կանգնեցրել են ու զբաղվում են հիմնականում ակադեմիական քաղաքի ստեղծման հարցով: Այժմ միայն դիմորդների ընդունելությունն է ակտիվ ընթանում, սակայն մյուս ուղղություններով ոչինչ չի արվում: Կարող ենք ասել,որ մի քանի բուհեր են, որ այժմ ունեն դիմորդներ, իսկ մարզային բուհերի շատ մասնաճյուղերում դիմորդներ չկան: Սակայն սա, կարծես թե, այնքան էլ չի անհանգստացնում իշխանություններին, եւ իրենք զբաղված են կրթության ոլորտի բարեփոխումներով. ակադեմիական քաղաքի ստեղծման աշխատանքները բաժանել են ոլորտների, ստեղծել հիմնադրամ, որն էլ գերծանրաբեռնված աշխատում է, որ կյանքի կոչի իշխանությունների ծրագիրը: Հավելենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը մեկնաբանության համար դիմեց հիմնադրամի նախագահ Արմեն Սիմոնյանին, սակայն նրանից մեկնաբանություն ստանալ չհաջողվեց: Նկատենք, որ պլանավորված ակադեմիական քաղաքի ստեղծումը կոմունիկացիոն, քաղաքային պլանավորման եւ այլ հարցերում լրջագույն խնդիրներ է ստեղծելու, մասնավորապես, որ նույն ժամին միանգամից մի քանի հազար մարդիկ պետք է հասնեն դասի՝դասախոսներն ու ուսանողները:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցությունը մտադիր է ժամանակավոր քննիչ հանձնաժողով ստեղծել՝ԱԺ պատգամավորների կողմից թույլ տված վարքականոնների խախտման բոլոր դեպքերի բացահայտման համար: Ընդդիմադիրների այս նախաձեռնության համար հիմք է հանդիսացել, մասնավորապես, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի մասնակցությամբ՝ Երեւանի կենտրոնում քաղաքացուն վիրավորելու եւ նրա վրա թքելու դեպքը, ՄԻՊ թեկնածուի քննարկման ժամանակ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նիստին ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի խուլիգանական վարքագիծը, ինչպես նաեւ փետրվարի 3-ին Լաչինի միջանցքի թեմայով խորհրդարանական լսումների ժամանակ ՔՊ-ական պատգամավոր Գուրգեն Արսենյանի հայտարարությունը, թե՝120 հազար արցախցու համար չարժէ ռիսկի տակ դնել 3 միլիոն հայաստանցու ճակատագիրը: «ԱԺ կանոնակարգ» օրենքը սահմանում է՝ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի անդամների թիվը սահմանվում է Ազգային ժողովի որոշմամբ, իսկ հանձնաժողովի կազմը հաստատում է Ազգային ժողովի նախագահը: Ըստ նույն օրենքի՝հանձնաժողովում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: ՔՊ-ամերձ մեր աղբյուրներից տեղեկացանք, որ իշխանականները դեմ են այս հանձնաժողովի ստեղծմանը, ուստի, տարբեր պատճառաբանություններով, փորձում են տապալել այս գործընթացը՝մեկ ժամանակավոր հանձնաժողովի նախագահի հարցում են առարկություններ ներկայացնում, մեկ հանձնաժողովի կազմի, մեկ՝դրա գործառույթների, այդպիսով՝ընդդիմության առաջարկած որեւէ տարբերակի հետ համաձայն չեն: Եթե ՔՊ-ականներին եւ ընդդիմադիրներին, ի վերջո, հաջողվի այս հարցում համաձայնության գալ, ապա նախագիծը կընդգրկվի ԱԺ հաջորդ նստաշրջանի օրակարգում: Հուսանք, որ այս հանձնաժողովի շրջանակներում քննության առարկա կդառնա նաեւ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի վարքը, ում մասով քաղաքացի Տաթեւ Վիրաբյանն արդեն դիմել է Ազգային ժողով:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանը, որ լրատվամիջոցների հետ զրույցում հայտարարել էր, որ վարձով է բնակվում, նոր բնակարան է ձեռք բերել «Անի» թաղամասում: Մեզ հետ զրույցում պատգամավորը չհերքեց այս տեղեկությունը՝նշելով, որ բնակարանը հիփոթեքով է ձեռք բերել 2 տարի առաջ: «90-ականներին էլ ես պատգամավոր էի, մինչ պատգամավոր դառնալս 5 տարի բնակարանի հերթի մեջ եմ եղել, հետո պատգամավոր դարձա, ընդդիմադիր խմբակցության՝ՀՅԴ անդամ էի, ու էլ չստացա բնակարան: 2020թ.-ին նոր կառուցվող շենքում բնակարան գնեցինք հիփոթեքով. հիմա ես, տղաներս, կինս, թոռնիկս այդ բնակարանում ենք ապրում, մեր հնարավորությունները թույլ տալիս են, որ կարողանանք հիփոթեքային վարկը մարել»,-մեզ հետ զրույցում ասաց Աղազարյանը: Ավելին՝ՔՊ-ական պատգամավորի որդիներն էլ պաշտոններ են զբաղեցնում պետական համակարգում. պատգամավորի կրտսեր որդին՝Հովսեփ Աղազարյանը, Նոր Նորքի թաղապետի տեղակալն է, իսկ մյուս որդին ՊԵԿ-ում է աշխատում: Ինչ վերաբերում է որդու փոխթաղապետ նշանակվելուն՝Աղազարյանը կարծում է, որ իր տղան, ընդունակությունների համեմատ, ցածր պաշտոն է զբաղեցնում. «Դա արդյունք է այն բանի, որ նա երկար ժամանակ է՝մեր թիմի կողքին է: Այն պաշտոնյաները, որոնք իրավասու են պաշտոնների նշանակելու, նկատել են նրա ընդունակությունները: Ինչ վերաբերում է ՊԵԿ-ում աշխատող իմ որդուն, նա մեկ տարուց ավելի աշխատել է այնտեղ, երբ քննություն պետք է լիներ, նա չհաղթահարեց շեմը. վաղուց դուրս է եկել ՊԵԿ-ից, այնտեղ չի աշխատում»,-ասաց Հովիկ Աղազարյանը:



Ազատ գյուղի զինվորների կացարանում բռնկված ողբերգական հրդեհի գործով՝նախաքննական մարմինը ուշագրավ հանգամանք է քննում: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինը քննում է վարկած, որ 15 զինվորների հրդեհի գործում կա հակառակորդի մասնակցությունը: Հիշեցնենք, որ հունվարի 19-ին Ազատ գյուղի զինվորական կացարանում հրդեհ էր բռնկվել, ինչի հետեւանքով մահացան 15 զինծառայողներ. սույն գործով մեղադրյալի աթոռին են 4 անձ: Այստեղ նաեւ հիշեցնենք, որ հրդեհից հետո Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը եւս կոչ էր արել դիտարկել հակառակորդի կողմից նմանօրինակ սադրանքի իրականացման հավանականությունը, եւ հիմա նախաքննական մարմինն այս վարկածը քննում է: Իրավապահները չեն բացառում հակառակորդի գործոնը:

ՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՁԱԳԱՆՔ

ԱՐՑԱԽԻ ՇՈՒՐՋ ՕՂԱԿԸ ՍԵՂՄՎՈՒՄ Է

Ադրբեջանական կողմը երեկ հերթական անգամ սադրանքի է դիմել՝ անկանոն կրակ արձակելով հայկական դիրքերի ուղղությամբ:

Մայիսի 11-ին՝ ժամը 06:00-ից սկսած, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները հրետանային եւ ականանետային միջոցներից կրակ են բացել Սոթքի մոտ տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ, ինչի հետեւանքով հայ 4 զինծառայող է վիրավորվել: Ադրբեջանի զինված ուժերը կրակ էր բացել նաեւ վիրավորում ստացած զինծառայողին տեղափոխող շտապօգնության մեքենայի ուղղությամբ: Ադրբեջանական կողմը հայտնում է մեկ զոհի եւ վիրավորների մասին:

Իսկ արդեն երեկոյան ժամը 18:25-ի սահմաններում ադրբեջանական կողմը խախտեց հրադադարը նաեւ Նորաբակի ուղղությամբ ՝ կիրառելով հրետանային միջոց:

Նկատենք, որ Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների վաշինգտոնյան բանակցություններից հետո կողմերը հայտարարում էին առաջընթացի մասին, նշում էին, որ կողմերը որոշ հարցերի շուրջ կարողացել են համաձայնության գալ: Սակայն վաշինգտոնյան բանակցություններից ընդամենը օրեր անց ադրբեջանական կողմը տարբեր ուղղություններով սադրանքի է դիմում՝ կրակելով հայկական դիրքերի ուղղությամբ:

«Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով զրուցել է «Հայաստան» խմբակցության ղեկավար, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանի հետ:

-Պարոն Օհանյան, ինչու՞ ադրբեջանական կողմը երեկ հերթական անգամ սադրանքի դիմեց, լարեց սահմանային իրավիճակը. ո՞րն էր այս ամենի նպատակը:

-Ադրբեջանը նման սադրանքներով փորձում է ազդել Հայաստանի վրա, զուգահառ նաեւ սեղմել օղակն Արցախի շուրջ. գործողությունները Հայաստանի եւ Արցախի սահմաններին պետք է դիտարկել մեկ համատեքստում, նման կերպ թշնամին փորձում է ճնշումներ գործադրել Հայաստանի վրա եւ սեղմել օղակն Արցախի շուրջ: Հայաստանի Հանրապետությունը, մեր զինված ուժերը պետք է պատրաստ լինեն նման սադրանքների, պետք է համարժեք արձագանք տան հակառակորդին:

-Ձեզ համար հասկանալի է՝ ինչո՞ւ հենց վաշինգտոնյան բանակցություններից ընդամենը մի քանի օր անց Ադրբեջանը սրեց իրավիճակը, կարո՞ղ ենք եզրակացնել, որ Ադրբեջանը բանակցություններում չի ստացել իր ուզածը եւ հիմա փորձում է ուժային ճանապարհով հասնել իր ուզածին:

-Ադրբեջանի գործողությունները շարունակական են լինելու, նախկինում՝ մինչեւ 2018թ.-ը, դրանից հետո էլ բանակցություններին զուգահեռ, Ադրբեջանը նման սադրանքներ եւ ագրեսիվ գործողություններ է իրականացնում, որպեսզի ճնշումներ գործադրի եւ իր շահն առաջ տանի բանակցություններում: Ուժային մեթոդներով է փորձում ստանալ իր ուզածը:

-Պարոն Օհանյան, հնարավո՞ր է, որ սահմանային լարված իրավիճակով պայմանավորված՝ ընդդիմությունը ԱԺ արտահերթ նիստ նախաձեռնի՝ վարչապետի եւ ՊՆ նախարարի մասնակցությամբ, որպեսզի քննարկեն սահմանային լարված իրավիճակը:

-Երբ որոշակի հանգամանքներ պարզ լինեն, իրադրությունը սրվի, ապա իրադրությանը համահունչ նաեւ ընդդիմությունը կգործի: Դեռ արտահերթ նիստ հրավիրելու որոշում չունենք, երբ լինի՝ կհայտարարենք այդ մասին:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿՐԱԿՈՑՆԵՐ՝ ՍԱՀՄԱՆԻՆ

ՀՐԱՏԱՊ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

«Կիրառե՛ք պատժամիջոցներ, պատասխանատվության ենթարկեք Ադրբեջանին՝ ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ հերթական ռազմական ագրեսիայի համար. հրատապ գրություններ միջազգային գործընկերներիս»: Այս մասին հայտարարություն է տարածել ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

Դեռ 2023 թվականի մարտի 15-ին միջազգային կառույցներին ահազանգել էի, որ Հայաստանում շփման գծի ողջ երկայնքով նկատվում է ադրբեջանական զինուժի, ծանր տեխնիկայի տեղաշարժ. սահմանամերձ բնակավայրերի բնակիչների համար է անգամ այն տեսանելի:

Բացի այդ, Ադրբեջանի հնարավոր ռազմական ագրեսիայի մասին ահազանագել էի նաեւ ապրիլի 25-29-ին Բրյուսել կատարած այցիս ժամանակ Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության պաշտոնյաների, Եվրոպական խորհրդարանի ներկայացուցիչների հետ պաշտոնական հանդիպումներում:

Ցավոք, միջազգային կառույցները, չնայած իրենց բոլոր մտահոգություններին, չկիրառեցին գործնական քայլեր՝ կանխելու Ադրբեջանի նոր ագրեսիան, որի հետեւանքով արդեն ունենք 4 վիրավոր, կոպիտ ոտնահարվել են ՀՀ սահմանամերձ բնակիչների կյանքի եւ մյուս հիմնարար իրավունքները, եւ, առհասարակ, միջազգային իրավունքը:

Հրատապ գրություններ եմ ուղարկում միջազգային բոլոր գործընկերներիս՝ ահազանգելով, որ Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները այսօր հրետանային եւ ականանետային միջոցներից կրակ են բացել Սոթքի ուղղությամբ տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ:

Պահանջում եմ հրատապ արձագանքել, կիրառել պատժամիջոցներ, պատասխանատվության ենթարկել Ադրբեջանին՝ ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ հերթական ռազմական ագրեսիայի համար:

ՄԻՊ ԶԵԿՈՒՅՑԸ

Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը մայիսի 11-ին հրապարակել է արտահերթ եռալեզու զեկույցի թարմացված տարբերակը՝Ադրբեջանի կողմից Արցախի հինգ ամսվա (150-օրյա) շրջափակման հետեւանքով մարդու անհատական եւ հավաքական իրավունքների խախտումների մասին:

Զեկույցում համապարփակ ու մանրամասն կերպով ներկայացվում են 7 անհատական իրավունքների, 5 խոցելի խմբերի եւ 4 հավաքական իրավունքների խախտումների վերաբերյալ տվյալներ, որոնք արտացոլում են խորացող հումանիտար ճգնաժամը եւ Արցախի ժողովրդի դեմ իրականացվող ադրբեջանական ցեղասպանական քաղաքականությունը:

Ստորեւ ներկայացնում ենք զեկույցում արտացոլված մի քանի հիմնական տվյալ շրջափակման հետեւանքով մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ՝

- Ստեփանակերտ-Գորիս մայրուղով (Լաչինի միջանցքով) մարդկանց երկկողմանի տեղաշարժի դեպքերը նվազել են շուրջ 200 անգամ (367,500-ի փոխարեն՝ 1,839 մուտք եւ ելք),
- Ճանապարհով գրեթե 54 անգամ ավելի քիչ մեքենայի շարժ է արձանագրվել, քան պետք է լիներ առանց շրջափակման (138,000-ի փոխարեն՝2,558 մեքենայի մուտք եւ ելք, այն էլ՝ միայն Կարմիր խաչի եւ ՌԴ խաղաղապահների կողմից),
- Շուրջ 13 անգամ ավելի քիչ կենսական նշանակության բեռ է ներկրվել, քան իրականում պետք է լիներ (60,000 տոննայի փոխարեն՝4,623 տոննա),
- Շրջափակման հետեւանքով իրենց տներ չեն կարողացել վերադառնալ ընդհանուր առմամբ շուրջ 3,900 անձինք, ներառյալ՝ 570 երեխա,
- Պլանային վիրահատությունների դադարեցման պատճառով մոտ 1200 քաղաքացի զրկվել է վիրահատվելու միջոցով առողջական խնդիրների լուծման հնարավորությունից,
- Ադրբեջանը հանրագումարային 85 օր շարունակ լրիվությամբ կամ մասնակիորեն ընդհատել է Հայաստանից Արցախ գազամատակարարումը,
- Արդեն 121 օր շարունակ լրիվությամբ խաթարված է Հայաստանից Արցախ էլեկտրամատակարարումը, ինչը շարունակում է հանգեցնել հովհարային եւ վթարային անջատումների,
- Փաստացի աշխատանքը եւ եկամտի աղբյուրը կորցրել է նախնական հաշվարկներով շուրջ 10,900 մարդ,
- Երկրի տնտեսությանը հասցվել է շուրջ 285 մլն ԱՄՆ դոլարի վնաս,
- Մի շարք իրավունքների խախտումներ ավելի սուր են արտահայտվում խոցելի խմբերի ներկայացուցիչների շրջանում, մասնավորապես՝30,000 երեխա, 9,000 հաշմանդամություն ունեցող անձ, 20,000 տարեց, 60,000 իգական սեռի ներկայացուցիչ (կին եւ աղջիկ) եւ 15,000 տեղահանված անձ:

Ի լրումն 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթների շարունակական ու բազմակի խախտումների՝ 80 օր շարունակ չիրագործելով նաեւ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի պարտադիր կատարման որոշումը՝ Լաչինի միջանցքով մարդկանց, մեքենաների ու բեռների անխափան ելքի եւ մուտքի ապահովման վերաբերյալ՝Ադրբեջանը հերթական անգամ ոտնահարել է միջազգային բարձրագույն արժեքներն ու սկզբունքները: Ավելին, դրանից հետո ադրբեջանական կողմը դիմել է ագրեսիվ գործողությունների՝ հանգեցնելով մարդկային կորուստների եւ այլ զրկանքների Արցախի ժողովրդի շրջանում, իսկ 2023 թվականի ապրիլի 23-ից անօրինական անցակետ է տեղադրել Հակարի գետի կամրջի մոտ: Միջազգային հանրությունը ոչ միայն իրավունք, այլեւ անառարկելի պարտավորություն ունի՝ օր առաջ գործնական միջոցներով կատարելու միջազգային բարձրագույն դատարանի որոշումը եւ կանխելու ադրբեջանական հետագա հանցագործությունները:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կկատարվեն: ArmLur.am-ը տեղեկացավ, որ փոփոխություններով դրույթ է սահմանվելու, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունում օդանավակայանների պաշտոնական պատվիրակությունների սրահներից պաշտոնատար անձանց, նրանց ընտանիքի անդամների եւ պաշտոնական պատվիրակությունների օգտվելու կարգը սահմանվում է վարչապետի որոշմամբ: Օրենքում նախատեսվելու է դրույթ՝ օդանավակայանների մյուս՝ պաշտոնական պատվիրակությունների սրահից օգտվելու կարգի վերաբերյալ՝ սահմանելով լիազորող նորմ, որի հիման վրա վարչապետի որոշմամբ սահմանված կարգով հնարավոր կլինի ապահովել Հայաստանի Հանրապետությունում օդանավակայանների պաշտոնական պատվիրակությունների սրահներից պաշտոնատար անձանց, նրանց ընտանիքի անդամների եւ պաշտոնական պատվիրակությունների օգտվելու կարգը: Բանն այն է, որ այժմ օրենքի 7.9-րդ հոդվածում սահմանված է, որ Հանրապետության նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի նախագահը, պաշտոնաթող Հանրապետության նախագահը, ինչպես նաեւ նրանց ուղեկցող ընտանիքի անդամները կարող են օգտվել Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում առանձնացված հատուկ սրահից: Առանձին դեպքերում հատուկ սրահից կարող են օգտվել նաեւ այլ անձինք՝ վարչապետի որոշմամբ սահմանված կարգով:

ՄԻԵԴ–Ը ՄԵՐԺԵԼ Է

Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակից հայտնում են, որ ՄԻԵԴ-ը մերժել է ՀՀ սահմանը ապօրինաբար հատած Ադրբեջանի երկու քաղաքացիների իրավունքների պաշտպանության համար վերջիններիս հարազատների կողմից ՀՀ կառավարության դեմ միջանկյալ միջոց կիրառելու մասին պահանջը: «Սույն թվականի մայիսի 9-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մերժել է վերջերս ՀՀ սահմանը ապօրինաբար հատած Ադրբեջանի երկու քաղաքացիների իրավունքների պաշտպանության համար վերջիններիս հարազատների կողմից ՀՀ կառավարության դեմ Եվրոպական դատարանի կանոնների 39-րդ կանոնով սահմանված միջանկյալ միջոց կիրառելու մասին պահանջը: Մասնավորապես, Եվրոպական դատարանից պահանջվել էր կիրառել միջանկյալ միջոց այն հիմնավորմամբ, որ ՀՀ-ում Ադրբեջանցի երկու զինծառայողների նկատմամբ դրսեւորվում է կյանքի իրավունքին եւ խոշտանգումներից զերծ մնալու պարտավորությանը հակասող վերաբերմունք: ՀՀ կառավարությունը Եվրոպական դատարան է ներկայացրել պատշաճ դիրքորոշում այն մասին, որ ադրբեջանցի զինծառայողների կոնվենցիոն իրավունքները պատշաճ երաշխավորվել են ՀՀ-ում: Այս առնչությամբ ՀՀ կառավարությունը Եվրոպական դատարան է ներկայացրել նաեւ համապատասխան ապացույցներ: Եվրոպական դատարանը, հիմնվելով ՀՀ կառավարության դիրքորոշման վրա, մերժել է ՀՀ դեմ միջանկյալ միջոց կիրառելու մասին ադրբեջանցի զինծառայողների հարազատների ներկայացրած պահանջը»,- հայտնում են ներկայացուցչի գրասենյակից:

ԿԳՆԱ ՀԱՆԴԻՊՄԱՆ

ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՓՈՔՐ

Երեկ վաղ առավոտվանից՝ ժամը 6-ից, հրետանային կրակի տակ են պահել Վարդենիսի Մոքֆ գյուղի ուղղությամբ տեղակայված հայկական դիրքերը: Պաշտպանության նախարարությունը 4 ժամ անց հաղորդեց միայն, որ լարվածությունը նվազում է: Երեկ այս հանգամանքին կառավարության նիստում անդրադարձավ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Ակտիվ հրետակոծության ինտենսիվությունը որոշակիորեն նվազել է հայկական բանակի ադեկվատ ու արդյունավետ պատասխան գործողություններից հետո», - գործադիրի այսօրվա նիստում ժամը 11-ին հայտարարեց վարչապետ Փաշինյանը՝ հայտարարելով, - «դեռ վաղ է իրադրությունը լիարժեք կայուն համարել»:

Ադրբեջանական ստորաբաժանումները, ըստ Հայաստանի պաշտպանական գերատեսչության, վիրավոր զինծառայողներին տեղափոխող շտապօգնության մեքենայի ուղղությամբ են կրակ բացել:

Պաշտոնական Բաքուն հայտարարում է՝ մարտական գործողություններում զոհված մեկ զինծառայողի մասին եւ պնդում են, որ դեռ երեկ երեկոյից է հայկական կողմը կրակում եւ ադրբեջանցի մի զինծառայող էլ ծանր վիրավորում է ստացել: Սա վարչապետը հորինվածք է համարում:

«Նախորդ օրը նման բան տեղի չի ունեցել մի պարզ պատճառով՝ որեւէ միջադեպ չի գրանցվել եւ ադրբեջանական դեզինֆորմացիոն մեքենան ետին թվով այդ լուրը հորինել է իրադրությունը սրելու համար», - ասաց Փաշինյանը:

Օրվա առաջին կեսին ադրբեջանական լրատվամիջոցները տեղեկություններ էին տարածում, թե հայկական կողմը նոր գործողության է նախապատրաստվում, կիրառում է իրանական անօդաչու թռչող սարքեր: Հայաստանի պաշտպանության նախարարությունը հերքում է՝ բանակը պաշտպանական-կանխարգելիչ միջոցառումներ է ձեռնարկում, իսկ իրանական անօդաչուներ հայկական սպառազինության մեջ չկան:

«Ադրբեջանական կողմի այս գործողությունները սադրիչ են եւ այլոց շարքում նպատակ ունեն զրոյացնել այն առաջընթացը, որ գրանցվել է մայիսի 1-4-ը Վաշինգտոնում տեղի ունեցած բանակցությունների ընթացքում: Երեկվա սադրանքը նպատակ ունի նաեւ խաթարել կիրակի օրը Բրյուսելում եռակողմ ֆորմատով, իսկ հունիսի 1-ին՝ Քիշնեւում հնգակողմ ֆորմատով նախատեսված բանակցությունները», - ասաց Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետի այս հայտարարություններին նախորդել էր Արտգործնախարարության կոչը Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությանը՝ դադարեցնել բանակցային գործընթացն ուժի կիրառմամբ խաթարելու եւ դրանով Հայաստանի վրա ճնշում գործադրելու անհիմն փորձերը: Չնայած հենց ինքը՝ Փաշինյանն էր այսօր հայտարարում՝ էսկալացիաները Բաքուն օգտագործում է բացառապես բանակցություններում գրանցված առաջընթացը զրոյացնելու համար, բայց ասաց. «բրյուսելյան բանակցությունները այս պահին չի չեղարկում»:

«Այս պահի դրությամբ կիրակնօրյա բանակցությունների համար Բրյուսել մեկնելու իմ որոշումը չեմ փոխել», - ընդգծեց Հայաստանի կառավարության ղեկավարը:

Փաշինյանն ամբողջությամբ չբացառեց կիրակի օրը Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիր ստորագրելու հավանականությունը, բայց եւ շատ փոքր համարեց դեպքերի նման զարգացումը:

Ն.Հ.

ԼՈՒՐԵՐ

ԵՌԱԿՈՂՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը եւ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը հեռախոսազրույց են ունեցել, որի ընթացքում քննարկել են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն եւ տեւական խաղաղությանն աջակցելու հնարավորությունները:

Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներ Արարատ Միրզոյանն ու Ջեյհուն Բայրամովը մայիսի 1-4-ը բանակցություններ են անցկացրել Վաշինգտոնում:

Բանակցությունների առաջին եւ վերջին նիստերին մասնակցել է նաեւ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը: Վաշինգտոնի քննարկումներից հետո ԵՄ-ն հայտնեց, որ մայիսի 14-ին Բրյուսելում կկայանա Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների, Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի եռակողմ հանդիպումը:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՎԵՐՋԻՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Թուրքիայի ԱԳՆ նախարար Մեւլութ Չավուշօղլուն հայտնել է, որ Մոսկվայում 4 երկրների ԱԳՆ նախարարների հետ քննարկել են տարածաշրջանային խնդիրները:

Թուրքական Anadolu-ի փոխանցմամբ Թուրքիայի ԱԳՆ նախարար Մեւլութ Չավուշօղլուն նշել է, որ իր ռուս գործընկեր Սերգեյ Լավրովի հետ քննարկել են հատկապես Հայաստան-Թուրքիա եւ Հայաստան-Ադրբեջան վերջին զարգացումները:

Չավուշօղլուն շեշտել է, թե հանդիպումը դրական է անցել:

ԱՄՆ–Ն ՍՊԱՌՆԱՑԵԼ Է

ԱՄՆ-ն նախազգուշացրել է Վրաստանին, որ պատժամիջոցներ կկիրառի, եթե Վրաստանը վերսկսի ավիահաղորդակցությունը Ռուսաստանի հետ: Այս մասին տեղեկացրել են պետդեպարտամենտի ներկայացուցիչները Accent-ի համար տրված մեկնաբանությունում:

Պետդեպարտամենտում հիշեցրել են, որ ԱՄՆ-ն եւ Եվրամիությունը, մասնավորապես, արգելում են ռուսական ինքնաթիռներին մտնել իրենց օդային տարածք:

«Եթե ուղիղ չվերթները Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ վերսկսվեն, դա կստիպի մեզ պատժամիջոցներ մտցնել վրացական ավիաընկերությունների դեմ, որոնք կսպասարկեն ներմուծման եւ արտահանման վերահսկողության ներքո գտնվող ինքնաթիռները»,- նշվել է հաղորդագրությունում:

ԳՈՐԾԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

ԵՊՀ-ԻՑ ՀԱՓՇՏԱԿՎԵԼ Է 5,7 ՄԼՆ ԴՐԱՄ

2019 թվականին «Երեւանի պետական համալսարան» առանձնապես խոշոր չափերի չարաշահումների վերաբերյալ հարուցված քրեական գործի (նախաձեռնված վարույթի) շրջանակում, նոր փաստական տվյալներ են ձեռք բերվել Հիմնադրամի կարիքների համար ձեռք բերված սարքավորումների գնման գործընթացի վերաբերյալ:

Մասնավորապես՝ Քննչական կոմիտեում իրականացված նախաքննությամբ պարզվել է, որ «Երեւանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի՝ 2016 թվականի հրամանով, Հիմնադրամի կարիքների համար էլեկտրակենցաղային սարքավորումներ ձեռք բերելու համար ստեղծվել է գնահատող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովի կազմում ընդգրկվել են նախագահ Ա.Ղ.-ն, անդամներ Մ.Ս.-ն, Կ.Մ.-ն, Ս.Հ.-ն եւ քարտուղար Ե.Ս.-ն:

Բաց ընթացակարգով էլեկտրական սարքավորումների ձեռքբերման ընթացակարգի հայտարարության եւ հրավերի տեքստերն ուղարկվել են շրջանակային համաձայնագիր կնքած անձանց էլեկտրոնային հասցեներին եւ սահմանվել հայտերի ընդունման վերջնաժամկետ: Մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել միայն «Երեւանի պետական համալսարան» հիմնադրամի գնումների վարչության գնումների մասնագետ Ա.Մ.-ի ամուսինը՝ անհատ ձեռնարկատեր Է.Մ.-ն, եւ «Մարինե-90» ՍՊ ընկերությունը:

2016 թվականի մայիսի 31-ին Հանձնաժողովի անդամները նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Է.Մ.-ից պահանջել են ներկայացնել որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր:

Հիմնադրամի գնումների վարչության գնումների մասնագետ Ա.Մ.-ի ամուսին Է.Մ.-ն, իրականությունը խեղաթյուրելու, մրցույթում հաղթող ճանաչվելու եւ Հիմնադրամի ռեկտորի կողմից 2016 թվականի մայիսի 20-ին հաստատված էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի եւ կենցաղային սարքավորումների գնման նախահաշվում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող էլեկտրակենցաղային սարքավորումներ մատակարարելու դիտավորությամբ, գրություն է ուղարկել Հանձնաժողովին, որ ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նախատեսված բնութագրերին:

Հանձնաժողովի անդամները անձնական շահագրգռվածությունից ելնելով՝ նոր մրցույթ չհայտարարելու հանգամանքով պայմանավորված, ԵՊՀ շահերին հակառակ, հօգուտ Է.Մ.-ի, որոշել են չմերժել Է.Մ.-ի ներկայացրած գնման ընթացակարգերին ակնհայտ չհամապատասխանող հայտը, որից հետո Է.Մ.-ն 7 մլն 155 հազար 967 դրամով տեխնիկական բնութագրերից տարբերվող էլեկտրակենցաղային սարքավորումներ է ձեռք բերել (19 սառնարան, 17 հեռուստացույց, 23 օդորակիչ), որի համար ԵՊՀ-ն դուրս է գրել 12 մլն 830 հազար դրամ:

Հրավերի տեխնիկական բնութագրից տարբերվող նշված ապրանքատեսակների մատակարարման վերաբերյալ Է.Մ.-ի Ա/Ձ-ի եւ «ԵՊՀ» հիմնադրամի միջեւ՝ ի դեմս ռեկտորի, կազմվել են հանձնման-ընդունման ակտեր, որից հետո Է.Մ.-ի կողմից ՀՀ-ում գործող այլ մատակարարից ձեռք բերված եւ հենց նրա կողմից անմիջապես Հիմնադրամին մատակարարված 7 մլն 155 հազար 967 դրամի ապրանքների դիմաց «ԵՊՀ» հիմնադրամը բանկային փոխանցմամբ Է.Մ.-ի Ա/Ձ-ին վճարել է 12 մլն 830 հազար դրամ. արդյունքում Է.Մ.-ն խարդախությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ 5 մլն 674 հազար 33 դրամ չհիմնավորված հավելյալ գումար:

2023 թվականի ապրիլի 28-ին նախաքննության ընթացքում մեղադրյալ Ս.Հ.-ի նկատմամբ կիրառվել է քրեական հետապնդումը դադարեցնելու որոշում՝ «Էրեբունի-Երեւան հիմնադրման 2800-ամյակի եւ Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ին ընդունված օրենքի դրույթների կիրառմամբ:

2023 թվականի ապրիլի 20-ին եւ 21-ին Ա.Ղ.-ի, Մ.Ս.-ի եւ Կ.Մ.-ի նկատմամբ դատախազի նախաձեռնությամբ հարուցվել է քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, որն առաջացրել է ծանր հետեւանքներ), իսկ Է.Մ-ի նկատմամբ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով խարդախություն):

Հսկող դատախազը 2023 թվականի մայիսի 10-ին հաստատել է մեղադրական եզրակացությունը եւ վարույթի նյութերի հետ հանձնել է Հակակոռուպցիոն դատարան:

ՈՐՈՇՈՒՄ

«ԳԼՈՐԻԱ»-Ի ՏՆՕՐԵՆԻ ԴՍՏԵՐ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2021 թվականի սեպտեմբերի 28-ին՝ ժամը 01:30-ի սահմաններում, Երեւանի «Հաղթանակ» զբոսայգու դիմաց կրակոցներ հնչեցին, ինչի հետեւանքով մահացավ «Գլորիա» կարի ֆաբրիկայի գլխավոր տնօրեն Բագրատիոն Դարբինյանի դուստրը՝ 27-ամյա Դիանա Դարբինյանը: Իրավապահները տեւական ժամանակ է, ինչ փնտրում էին սպանության ենթադրյալ կատարողին:

Արդյունքում, ոստիկանությունը մայիսի 9-ին պաշտոնական հաղորդագրություն տարածեց՝ հայտնելով, որ քրեական ոստիկանության գլխավոր վարչության, Երեւան քաղաքի վարչության եւ Բելառուսի Հանրապետության իրավապահների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Բելառուսի Հանրապետությունում հայտնաբերվել եւ մայիսի 7-ին Հայաստան է տեղափոխվել 24-ամյա Լեւոն Ավետիսյանը, որը 2021թ. օգոստոսի 3-ից հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ (Սպանության փորձը), 104-րդ (Սպանությունը) եւ մի շարք այլ հոդվածների մեղադրանքով: Լեւոն Ավետիսյանի պաշտպան Ալեքսանդր Կոչուբեւը վստահեցնում է՝ կամայական արդարադատություն է իրականացվում եւ Ավետիսյանը կապ չունի այս սպանության հետ:

Այս պատմության մեջ ամենաուշագրավն այն է, որ կալանավորված Լեւոն Ավետիսյանը սպանված Դիանա Գասպարյանի ամուսնու բարեկամն է:

Իսկ, ահա, «Գլորիա» կարի ֆաբրիկայի գլխավոր տնօրեն Բագրատիոն Դարբինյանի դստեր սպանության գործով փաստաբան Հովսեփ Սարգսյանը հայտնեց, որ տեղեկություններ են ստացվել, որ գործով կարեւոր վկայի նկատմամբ կա ճնշում, եւ նա որոշել է վարույթ իրականացնող մարմնի դիմում ներկայացնել եւ հայտնել, թե իբր այն, ինչ ասել է նախկինում, իրականության հետ կապ չունի:

Ինչո՞ւ է կարեւոր վկան 1 տարի անց որոշել նման քայլի գնալ, ով կամ ովքեր են նրան ճնշման ենթարկել, որ նա գնում է այդ քայլին, հուսանք՝ կպարզի նախաքննական մարմինը՝ ի դեմս Քննչական կոմիտեի:

Ինչեւէ, փաստ է մեկ բան՝ սպանությունը կատարելու համար կալանավորված է Լեւոն Ավետիսյանը: Վերջինս կշարունակի մնալ կալանավորված:

ArmLur.am-ի ձեռքում է հայտնվել աղմկահարույց սպանության տեսագրությունը, թե ինչպես է սպանություն կատարողը մոտենում եւ կրակոցներ արձակում Դիանա Դարբինյանի ամուսնու մեքենայի ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՄԱՀԱՑԵԼ Է

Մայիսի 11-ին՝ ժամը 00:50-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Վաղարշապատ-Արմավիր ավտոճանապարհին տեղի է ունեցել ՃՏՊ՝ ավտոմեքենան բախվել է արգելապատնեշին, կա արգելափակված քաղաքացի:

ՆԳՆ փրկարար ծառայությունից հայտնում են, որ դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ Mitsubishi Diamante մակնիշի ավտոմեքենան (վարորդ՝Գ. Ե., ծնված 1977թ.) բախվել է ավտոճանապարհի բաժանարար բետոնե արգելապատնեշին:

Մինչ փրկարարների կանչի վայր հասնելը՝վարորդը եւ ուղեւոր Թ. Պ.-ն (ծնված 1982 թ.) հոսպիտալացվել են Վաղարշապատ քաղաքի ԲԿ:

Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենան, փակել գազի բալոնի փականը եւ սահմանազատել տարածքը:

ՈՉՆՉԱՑՎԵԼ Է 11 ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ

2020 թվականին հայտարարված ռազմական դրության եւ զորահավաքի շրջանակներում ռազմատրանսպորտային պարտականություն ունեցող մարմիններից ներգրավվել են տրանսպորտային միջոցներ, որոնց ռազմական գործողությունների ժամանակ հասցվել է վնաս:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ «Գույքի գնահատման եւ աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից գնահատման արդյունքներով դրական եզրակացություն է կայացվել թվով 26 ֆիզիկական եւ իրավաբանական անձանց փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ, որի գումարը ընդհանուր կազմել է 49 մլն 37 հազար դրամ:

Մենք տեղեկացանք, որ 26 տրանսպորտային միջոցներից 11-ն ընդհանրապես ոչնչացված են եւ առկա չեն, 1-ը կրել է այնպիսի վնաս, որը հնարավոր չէ վերականգնել նպատակային նշանակությամբ օգտագործելու համար, 14-ը վնասված վիճակով վերադարձվել են սեփականատերերին եւ կարող են օգտագործվել նպատակային նշանակությանը համապատասխան:

Անհրաժեշտություն է առաջացել համապատասխան գումարը ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացնել ՀՀ կառավարության 2023 թվականի պահուստային ֆոնդից:

Եվ այս որոշման նախագծի ընդունմամբ պայմանավորված՝ 2023 թվականի պետական բյուջեում առաջացնում է լրացուցիչ 49 մլն դրամի չափով ծախսերի կատարում, որը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվելու է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ այնուհետեւ համապատասխան ֆիզիկական եւ իրավաբանական անձանց փոխանցելու համար:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 10-ից 11-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ՝ ՊԵՏԲՅՈՒՋԵԻՑ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկատվական հարցում է ուղարկել՝հարցնելով, թե Տավուշի մարզի սահմանամերձ ո՞ր բնակավայրերում որքա՞ն են կազմում հակառակորդի զինուժի կողմից վերահսկվող, դրա նշանառության տակ գտնվող, ականապատ, չօգտագործվող հողերը: Որքա՞ն է կազմում այդ տարածքների հողի հարկը, այդ հարկի համար պետական բյուջեից տարեկան որքա՞ն գումար, ո՞ր համայնքներին է փոխհատուցվում: Տավուշի մարզպետարանից «Ժողովուրդ» օրաթերթին պատասխանել են, որ Տավուշի մարզի Իջեւան, Բերդ, Նոյեմբերյան համայնքների սահմանամերձ 23 բնակավայրերի սեփականաշնորհված հողատարածքների սեփականատերերն օգտվում են «հողի հարկի արտոնությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունից: Ականապատված եւ չօգտագործվող հողատարածքների հողի հարկն ամբողջությամբ փոխհատուցվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝համապատասխան համայնքին լրացուցիչ դոտացիա հատկացնելով: Ըստ համայնքների՝ փոխհատուցումը կատարվում է հետեւյալ կերպ: Իջեւան համայնքին հատկացվում է 13 միլիոն 682 հազար 200 դրամ(Այգեհովիտ, Բերքաբեր, Ներքին Ծաղկավան,Կիրանց, Սարիգյուղ, Սեւքար, Վազաշեն սահմանամերձ բնակավայրեր): Բերդ համայնքին հատկացվում է 15 միլիոն 231 հազար 900 դրամ (Այգեձոր, Արծվաբերդ,Մովսես,Ներքին Կարմիրաղբյուր, Չինարի, Չորաթան, Պառավաքար սահմանամերձ բնակավայրեր): Նոյեմբերյան համայնքին հատկացվում է 15 միլիոն 65 հազար 100 դրամ (Նոյեմբերյան, Բաղանիս, Բարեկամավան, Բերդավան, Դովեղ, Կոթի, Ոսկեվան, Կողբ, Ոսկեվան, Կողբ, Ոսկեպար սահմանամերձ բնակավայրեր):

ՀԻՆ «ԳԱԶԵԼ»–ՆԵՐՈՎ

Երեւան-Իջեւան, Երեւան-Դիլիջան եւ հակառակ ուղղություններով հասարակական տրանսպորտում աշխատում են հին «Գազել»-ներ: Երեւանից մինչեւ Տավուշի մարզկենտրոն Իջեւան քաղաք հեռավորությունը 136 կիլոմետր է, որը «Գազել»-ները հաղթահարում են մոտ երկու ժամում: Հակառակ ուղղությամբ՝Իջեւանից Երեւան մեկնելիս հասարական տրանսպորտ «Գազելները» Սեւան քաղաքի ավտոգազալիցքավորման ճնշման կայաններում գազով լիցքավորում են, որի համար մոտ 15 րոպե ժամանակ է ծախսվում: Դիլիջան քաղաքից Երեւան մեկնող միկրոավտոբուսները իրենց ուղերթն ավարտում են քաղաքի հյուսիսային ծայրին՝ ռադիոկայմի մոտ, ինչը Դիլիջանից Երեւան մեկնածների համար դժվարություններ է առաջացնում ռադիոկայմից մայրաքաղաքի տարբեր հատվածներ հասնելու համար: Այս խնդիրներն են պատճառը, որ Երեւան-Իջեւան, Երեւան-Դիլիջան եւ հակառակ ուղղություններով հասարակական տրանսպորտին զուգահեռ, հասարակական տրանսպորտից առավել ակտիվ աշխատում են տաքսի ծառայությունները եւ մասնավոր տաքսիները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐ

«ԱՆԲԱՎԱՐԱՐ» ՍՏԱՑՈՂՆԵՐԸ ԿԶՐԿՎԵՆ

Կառավարությունն իր նիստում հաստատեց ՊՆ համակարգի մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող սպայական, ենթասպայական եւ շարքային պայմանագրային զինծառայողների ատեստավորման արդյունքների գնահատման նոր ձեւաչափը եւ դրա հիման վրա հավելավճարների նոր չափերը:

Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, ներկայացնելով նախագիծը, նշեց, որ ատեստավորման արդյունքում «անբավարար» ստացած զինծառայողները կզրկվեն հավելավճարից:

«Ատեստավորման արդյունքներով հաշվարկված հավելավճարի չափը ենթակա չէ վճարվելու, եթե ֆիզիկական, շարային եւ կրակային պատրաստվածության գնահատման արդյունքներով զինծառայողն առնվազն մեկ պատրաստվածության աստիճանից կամ մասնագիտական գիտելիքների եւ ծառայողական պարտականությունների իմացության թեստավորումից ստացել է «անբավարար» գնահատական» ,- ասաց նախարարը:

Պապիկյանը հստակեցրեց, որ յուրաքանչյուր ստուգման ժամանակ «անբավարար» ստանում է այն զինծառայողը, ով առնվազն 21 հարցի սխալ է պատասխանում: 30-34 հարցերի ճիշտ պատասխանողը կստանա «բավարար», 35- 44 ճիշտ պատասխանի դեպքում՝ «լավ», իսկ 45 եւ ավելի հարցերի ճիշտ պատասխանողները կստանան «գերազանց» գնահատական:

Ընդհանուր ատեստավորումից «գերազանց» է ստանում այն զինծառայողը, ով պատրաստվածության բոլոր ձեւերից ու ծառայողական գիտելիքներից ստանում է միայն «գերազանց»: «Լավ» կգնահատվի այն զինծառայողը, ով բոլոր ստուգարքներից կստանա «գերազանց» եւ միայն մեկից՝«լավ»: «Բավարար» կգնահատվի, եթե մեկ ստուգարքից ստանա «բավարար», մյուսներից՝ «լավ» եւ «գերազանց»:

Ինչ վերաբերում է հավելավճարների չափերին, «գերազանց» ստացող սպաները կստանան 470 000 դրամ, «լավ» ստացողները՝ 420 000, «բավարար» ստացողները՝ 230 000 դրամ հավելավճար:

Զինվորական մյուս կազմերը «գերազանցի» դեպքում կստանան՝ 395 000 դրամ, «լավի» դեպքում՝ 345 000, «բավարարի» դեպքում՝ 205 000 դրամ:

Նշենք, որ հավելավճարները տրվելու են ամեն ամիս:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն էլ ասաց, թե սպայական կազմից «գերազանց» ստացողը, եթե ստանում է 350 հազար դրամ, ատեստավորման դեպքում կստանա 700 հազար դրամ, եթե ստանում է 400 հազար՝ կստանա 800 հազար դրամ:

Սուրեն Պապիկյանն ավելի մանրամասնեց. դիցուք՝ շարքային կազմը ատեստավորման «բավարար» գնահատական ստանալու պարագայում, մարտական հերթապահությունը ներառյալ, կստանա 321 հազար 910 դրամ, «լավ»-ի դեպքում՝ 439 հազար 910 դրամ, «գերազանց»-ի դեպքում՝ 470 հազար 910 դրամ:

«Սա շարքային կազմի ամենաբարձր կոդն է, ունենք ավելի ցածր կոդեր: Օրինակ՝ գնդապետը «բավարար» գնահատականի դեպքում մարտական հերթապահություն իրականացնող զորամասում կստանա 737 հազար 760 դրամ, իսկ «գերազանց»-ի դեպքում՝ 923 հազար 260 դրամ»,- հավելեց նախարարը:

ՎԱՐԿ

ԻՆՉ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՆ ԴՐՎԵԼ

Կառավարությունն իր մայիսի 11-ի նիստում հավանություն տվեց Հայաստանի եւ Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի միջեւ «Կանաչ, դիմակայուն եւ ներառական զարգացման քաղաքականության վարկ» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ Հայաստանի եւ Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի միջեւ 2023թ. ապրիլի 4-ին ստորագրվել է «Կանաչ, դիմակայուն եւ ներառական զարգացման քաղաքականության վարկ» բյուջետային աջակցության վարկային համաձայնագիրը՝92,300,000 եվրո արժողությամբ:

Բյուջետային աջակցության միջոցներն ուղղվելու են «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված պակասուրդի ֆինանսավորմանը, հետեւաբար վարկային միջոցների ժամանակին ստացումը կարեւոր նշանակություն ունի պետական բյուջեի կատեգորիաներով նախատեսված ծախսերի ֆինանսավորման տեսանկյունից:

Բյուջետային աջակցության միջոցների ստացման համար նախապայման է հանդիսանում երկկողմ փոխհամաձայնեցված քաղաքականության գործողությունների աղյուսակով սահմանված՝ մի շարք ոլորտներում միջոցառումների եւ բարեփոխումների իրականացումը:

Ծրագրի շրջանակը, մասնավորապես, ներառում է.

Կլիմայի փոփոխության մեղմացման եւ հարմարվողականության խթանում եւ շրջակա միջավայրի կառավարման համար կարգավորող շրջանակի բարելավում,

Հավասարության ամրապնդում եւ մարդկային կապիտալի զարգացման խթանում,

Հակակոռուպցիոն շրջանակի եւ արդարադատության ոլորտի արդյունավետության հզորացում:

Հայաստանի ու Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ 2023թ. ապրիլի 4-ին ստորագրված «Կանաչ, դիմակայուն եւ ներառական զարգացման քաղաքականության վարկ» վարկային համաձայնագիրը ՀՀ պետական բյուջեի համար առաջացնում է լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 14 ՃՏՊ. 20 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Երեւանի պետական հենակետային բժշկական քոլեջի՝ 2011 թվականի «Քույրական գործ» բաժնի շրջանավարտ Թամարա Աշոտի Պողոսյանին 07.07.11թ. տրված AK N 097044 (գրանցման համար 1172) դիպլոմը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Երեւանի պետական հենակետային բժշկական քոլեջի 2012 թվականի՝ «Մանկաբարձական գործ» բաժնի շրջանավարտ Տաթեւիկ Լեռնիկի Գրիգորյանին 2012 թվականին տրված AK N 103408 դիպլոմը:

ՋՐԱՌ՝ ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ

Կառավարությունն իր մայիսի 11-ի նիստում ոռոգման նպատակով 2023 թվականին Սեւանա լճից ջրառի մասին որոշում կայացրեց:

Որոշման ընդունումը պայմանավորված է ոռոգման ջրառաջարկի դեֆիցիտը մասնակի մեղմելու անհրաժեշտությամբ:

Ջրօգտագործողների կողմից ներկայացված ջրապահանջի համաձայն՝ պայմանագրային ոռոգվելիք հողատարածությունների մակերեսը կազմել է շուրջ 31.3 հազար հա, իսկ ոռոգման ջրի պահանջարկը համակարգերի գլխամասերում եւ Հրազդան գետի հունի լվացման նպատակով՝ գետի հունով բաց թողնվող ջրի ծավալը կկազմի շուրջ 521 մլն մ3:

Նշված ծավալի ջրի պահանջարկը նախատեսվում է ապահովել Հրազդան գետից շուրջ 172մլն մ^3, Ազատի ջրամբարից շուրջ 45 մլն մ^3, Ապարանի ջրամբարից շուրջ 5 մլն մ^3 ջրաքանակներով:

Միաժամանակ նախատեսվում է Մխչյանի եւ Ռանչպար-Արեւշատ պոմպակայանների առավելագույն հզորությամբ գործարկմամբ ապահովել շուրջ 31 մլն մ^3 ջրարտադրություն (ընդամենը՝ 253մլն մ^3):

Պահանջարկի եւ վերը նշված ջրային օբյեկտներից հնարավոր ջրառի՝ ջրառաջարկի տարբերությունը կազմում է շուրջ 268 մլն մ^3:

Կառավարության սույն որոշման նախագծով նախատեսվել է լճից ոռոգման նպատակով մինչեւ 170 մլն մ^3 ծավալով բացթողում:

Այսպիսով՝ ոռոգման հաշվարկված ջրապահանջի (շուրջ 521 մլն մ3) եւ հնարավոր ջրառաջարկի (253+170=423 մլն մ^3) տարբերությունը (դեֆիցիտ) կազմում է շուրջ 98 մլն մ^3, որտեղ հաշվի չեն առնվել ամառային ամիսների եղանակային պայմանների հնարավոր փոփոխությունները (լիազոր մարմնի կողմից ներկայացվել է ճշգրտված կանխատեսումը):

ԱՐՑԱԽԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՆՎԱԳ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՐՈՇ ԽՄԲԵՐԻ

Արցախի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման համաձայն՝ մայիսի 9-ի՝ Հաղթանակի տոնի, Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի եւ Շուշիի ազատագրման օրվա կապակցությամբ սոցիալական որոշ խմբերի անձանց հատկացվող միանվագ դրամական օգնության տրամադրումը սկսված է:

Արցախի սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարությունից հայտնում են, որ դրամական օգնության իրավունք ունի Արցախի Հանրապետությունում հաշվառված՝

- Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ Արցախի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմիններում (այսուհետ՝ համապատասխան մարմին) զինվորական կամ փրկարարական ծառայության (այսուհետ՝ զինծառայություն) ընթացքում ստացած վնասվածքի կամ խեղման, կամ դրանց հետեւանքով ստացած հիվանդության արդյունքում հաշմանդամ ճանաչված անձը՝ անկախ հաշմանդամության եւ պատճառական կապի սահմանման ժամկետից (այսուհետ՝ հաշմանդամ զինծառայող).
- Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ համապատասխան մարմնում զինծառայության ընթացքում զոհված (մահացած) կամ անհայտ կորած, կամ դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված, կամ զինծառայությունից սահմանված կարգով արձակված եւ, անկախ ժամանակաշրջանից, զինծառայության ընթացքում ստացած վնասվածքի կամ խեղման կամ դրանց հետեւանքով ստացած հիվանդության պատճառով մահացած անձի ընտանիքի անդամը (այսուհետ՝ զոհված զինծառայողի ընտանիքի անդամ).
- Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանին եւ 1991 թվականի սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում գումարված Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի եւ Շահումյանի շրջանային խորհրդի միացյալ նիստին մասնակցած պատգամավորը (այսուհետ՝ պատգամավոր).
- Հայրենական մեծ պատերազմում մարտական գործողություններին մասնակցելու հետեւանքով հաշմանդամ դարձած անձը, ինչպես նաեւ Հայրենական մեծ պատերազմի մարտական գործողությունների այն մասնակիցը, ով հաշմանդամ է դարձել հետագայում (այսուհետ՝ Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ).
- ԽՍՀՄ զինված ուժերի, պետական անվտանգության կոմիտեի եւ ներքին գործերի նախարարության համակարգերի (այսուհետ՝ ԽՍՀՄ զինված ուժեր) կազմում այլ պետություններում մարտական գործողություններին մասնակցելու հետեւանքով հաշմանդամ դարձած անձը, ԽՍՀՄ զինված ուժերի կազմում ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած անձը, ինչպես նաեւ Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարի հետեւանքների վերացման աշխատանքներին մասնակցելու հետեւանքով հաշմանդամ դարձած անձը (այսուհետ՝Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամներին հավասարեցված անձ).
- Հայրենական մեծ պատերազմի մարտական գործողությունների մասնակիցը (այսուհետ՝ Հայրենական մեծ պատերազմի մասնակից).

ԽՍՀՄ զինված ուժերի կազմում այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցը (այսուհետ՝ Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին հավասարեցված անձ).

- ԽՍՀՄ զինված ուժերի կազմում այլ պետություններում մարտական գործողությունների ժամանակ կամ ԽՍՀՄ զինված ուժերի կազմում ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողի ընտանիքի անդամը (այսուհետ՝ ԽՍՀՄ զինված ուժերի կազմում ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողի ընտանիքի անդամ).
- Հայրենական մեծ պատերազմի տարիներին թիկունքում զինծառայություն անցած կամ աշխատած այն անձը, ով պարգեւատրվել է «Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ հաղթանակի համար 1941-1945 թթ.» կամ «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում քաջարի աշխատանքի համար» ԽՍՀՄ մեդալով (այսուհետ՝ ԽՍՀՄ մեդալակիր):

Դրամական օգնության վճարումներն իրականացվում են Ստեփանակերտ քաղաքում եւ շրջաններում գործող «Արցախփոստ» ՓԲԸ բաժանմունքների կողմից՝ ըստ քաղաքացիների հաշվառման (բնակության) վայրի:

Սոցիալական խմբերին պատկանող տեղահանված քաղաքացիների վճարումներն իրականացվում են «Արցախբանկ»-ի մասնաճյուղերի միջոցով:

Դրամական օգնությունը ստանալու համար անհրաժեշտ է ներկայանալ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

ՊԱՏԱՍԽԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՕՐԵՆՔՈՒՄ

Ի պատասխան www.armlur.am լրատվական կայքում հրապարակված «ՔՊՆ՝ հերթական սկանդալի մեջ» հոդվածի՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հայտնում է.

2022 թվականին կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրականացրել է պարտադիր աուդիտի ենթակա եւ պետական ֆինանսավորում ստացող 5 կուսակցությունների, ինչպես նաեւ պարտադիր աուդիտի ենթակա եւ պետական ֆինանսավորում չստացող 6 կուսակցությունների 2021 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգում:

Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի ընթացքում աուդիտորական կազմակերպությունների, ինչպես նաեւ կուսակցությունների կողմից բարձրացվել են մի շարք օրենսդրական խնդիրներ, որոնք առավել ակներեւ են դարձել կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման փուլում եւ դրանով պայմանավորված՝ Հանձնաժողովը հանդես է եկել «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու առաջարկով:

Ներկայացված նախագիծն ընդունվել է ԱԺ-ի կողմից, եւ կուսակցությունների պետական նպատակային ֆինանսավորումը 2022 թվականի համար տրամադրվել է ամբողջությամբ՝ առանց օրենքով սահմանված պահանջների ապահովման:

Կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության գործառույթի ընթացքում Հանձնաժողովը հավաքագրել եւ արդեն 2023 թվականի 1-ին եռամսյակում կազմակերպել է հանրային լայն քննարկումներ՝ ներկայացնելով օրենքի կիրառման արդյունքում վերհանված խնդիրները, ինչպիսի քննարկումներին մասնակցել են շահագրգիռ բոլոր կողմերը:

Արդեն 2023 թվականի փետրվար ամսին Հանձնաժողովը մշակել է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում եւ հարակից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը, որը ներկայացվել է արդարադատության նախարարություն՝ օրենքով սահմանված կարգով շրջանառելու:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«ՈՉ ՄԻ ՇԱԲԱԹ ԱՌԱՆՑ ՏԵՐՅԱՆԻ»

Հետաքրքիր հուշեր, սիրված ու անհայտ բանաստեղծություններ, հոդվածներ, օրագրային գրառումներ, բացառիկ լուսանկարներ, որոնք կօգնեն խորհել Տերյանի հեռ յուրաքանչյուր օր ու շաբաթ: «Զանգակ» հրատարակչությունն ընթերցողին է ներկայացրել «Ոչ մի շաբաթ առանց Տերյանի» ժողովածուն: Գիրքը համալրում է հրատարակչության «Ոչ մի շաբաթ առանց գրականության» շարքը եւ այս ձևաչափով լույս տեսած գրքերից յոթերորդն է:

«Ես փորձել եմ Տերյանին ներկայացնել հնարավորինս ընդգրկուն եւ բազմազան՝ նամակներում, բանաստեղծություններում, հուշերում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող կարողանա գտնել ի՛ր Տերյանին եւ բացահայտել սիրելի բանաստեղծի անհուն խորությունը: Սա, իհարկե, գիտական ուսումնասիրություն չէ, բայց նշված են աղբյուրները, եւ ընթերցողը կարող է փնտրել, գտնել, ճանաչել Տերյանին»,- նշում է գրքի կազմող եւ խմբագիր Հայկ Համբարձումյանը: Բանաստեղծի կյանքն ու ստեղծագործությունները գրքում ներկայացված են տարվա շաբաթներին համապատասխան՝ 52 անդրադարձ-դրվագներով:

Սիրված ու անհայտ բանաստեղծություններից զատ ընտրանիում տեղ են գտել նաեւ գրողի նամակները, թարգմանությունները, բացառիկ լուսանկարներ ու դրվագներ նրա կյանքից, որոնք բացահայտում են Տերյանին՝ որպես հզոր պոետի, հայրենասեր քաղաքացու եւ հասարակական գործչի: ««Զանգակ» հրատարակչության եւ Հայկի այս նախաձեռնությունն ուղղակի փառահեղ գաղափար է, քանի որ մենք դասագրքերից դուրս չենք ճանաչում մեր գրողներին:

«Ոչ մի շաբաթ առանց գրականության» շարքի ընտրանիները եւ հատկապես Տերյանին նվիրված այս ժողովածուն փոխում են շատ ընթերցողների կաղապարային ընկալումները, եւ ընդարձակված կամ փոփոխված պատկերացումներ են տալիս մեր գրողների մասին: Այս տեսանկյունից են բացահայտվել Եղիշե Չարենցի, Հովհաննես Թումանյանի, Հրանտ Մաթեւոսյանի կերպարները, հիմա էլ Տերյանին ենք նորովի բացահայտում: Այս դեպքում առավել քան նկատելի է դա: Եթե Տերյանի կերպարը բացահայտված լիներ, չէր լինի կարծրատիպը «տերյանական աշունների» ու տխրությունների մասին, չէին լինի պարզունակ պատկերացումները տերյանական հայրենասիրության եւ սիրերգության մասին: Շատ հաճելի է, որ այս ընտրանին գալիս է այդ օրինաչափությունները ցրելու, որովհետեւ եւ՛ ընտրված լուսանկարները, եւ՛ տեքստերը բացահայտում են բոլորովին ուրիշ Տերյանի, մարդու, որը ոչ միայն նուրբ ապրումների տեր բանաստեղծ էր, այլեւ ակնառու քաղաքացի, որի նման գործիչներ մենք շատ քիչ ենք ունեցել: Եթե շարքի նախորդ գրքերն օրացուցային ուղղվածություն ունեին, այս ընտրանին արդեն մենագրության է մոտենում կամ կենսագրավեպի»,- նշում է գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանը:

Շարքի առաջին գրքերը ունեին օրացուցային կառուցվածք եւ կարող էին դառնալ յուրօրինակ նոթատետրեր: Ընթերցողի համար թողնված էին ազատ էջեր ու տողեր, որտեղ նա կարող էր գրել իր սիրած տողերը, նշումներ անել: Մատենաշարի վերջին գրքերում ազատ էջերը գնալով նվազում են, իսկ Տերյանին նվիրված ժողովածուում արդեն բացակայում են: «Մեզ համար կարեւոր էր, որ ընթերցողն ապրի գրականության մեջ, ամեն օր պոեզիա կամ արձակ լինի իր կյանքում, դրա համար մտածել էինք ընտրանի-նոթատետր ձեւաչափը: Բայց ժամանակը ցույց տվեց, որ ընթերցողները չեն ուզում նշումներ անել գրքում եւ ընտրանիները այդպես էլ նոթատետր չդարձան: Աստիճանաբար բաց էջերը նահանջեցին՝ իրենց տեղը զիջելով բանաստեղծությունների, ուսումնասիրությունների եւ այլն:

«Ոչ մի շաբաթ առանց Տերյանի» ժողովածուի շապիկի վրա որպես հիշողություն թողել ենք նոթատետր-ընտրանի գրվածքը, բայցեւայնպես, հաջորդիվ արդեն նոթատետր բառն էլ դուրս կգա, եւ կմնա ընտրանին, բայց ոչ թե բանաստեղծությունների կամ երկերի ընտրանի, այլ, այսպես ասած, հեղինակի կյանքի դրվագների ընտրանի»,-պատմում է Հայկ Համբարձումյանը: «Զանգակ» հրատարակչության «Ոչ մի շաբաթ առանց գրականության» շարքը շարունակական կլինի: Հաջորդիվ ընթերցողի սեղանին կդրվի Ավետիք Իսահակյանին նվիրված ընտրանին:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

«ԳՈՅ» ԹԱՏՐՈՆԸ ՄԻԱՑՎԵՑ «ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ»-ԻՆ

«Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը վերակազմավորման ձեւով միացվեց «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը:

Որոշումն ընդգրկված էր կառավարության աերեկվա օրակարգում: Հիմնավորման մեջ նշվում է, որ այս որոշումը կնպաստի նշյալ կազմակերպությունների մասնագիտական ռեսուրսների կենտրոնացման ու կարողությունների զարգացմանը, կխթանի ֆինանսական միջոցների ավելացմանը:

Բանն այն է, որ մինչ այժմ «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոնը» եւ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը գործում են նույն ենթակառուցվածքային համակարգում (շինություն, կոմունալ հանգույցներ եւ այլն):

Այս ամենին զուգահեռ, կադաստրային տարածքի եւ փաստացի զբաղեցրած տարածքների մեջ նույնպես առկա են տարբերություններ: Այս ամենն առաջացնում է լոգիստիկ բազմաթիվ խնդիրներ:

Ընդ որում՝ գոյության ողջ ընթացքում կոմունալ բոլոր ծախսերը հոգացել է Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը: Մոտավոր հաշվարկով՝ յուրաքանչյուր տարի 3.5-4 միլիոն դրամ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՍՊԱՍՎՈՒՄ Է ՊԱՏԱՍԽԱՆ ԽԱՂ

Իտալիայի չեմպիոն «Միլանի» իտալացի գլխավոր մարզիչ Ստեֆանո Պիոլին մեկնաբանել է երկրի փոխչեմպիոն «Ինտերից» կրած 0:2 հաշվով պարտությունը Չեմպիոնների լիգայի կիսաեզրափակիչի առաջին խաղում: Հյուրընկալող կողմը «Միլանն» էր:

«Պետք է առաջ շարժվենք երկրորդ խաղակեսում մեր ունեցած տրամադրվածությունից: Մենք ունեինք հնարավորություն վերադարձնել խաղը մեզ համար ցանկալի հունի: Մենք սխալներ թույլ տվեցինք առաջին խաղակեսում եւ պետք է հաջորդ խաղում այլ կերպ գործենք:

Հիմա տղաները հիասթափված են, բայց գիտեն, որ պատասխան խաղում ամեն ինչ կփոխեն:

Դժգոհ եմ մրցավարից: Շատ դրվագներում նա երկակի չափանիշ էր կիրառում»,- Պիոլիի խոսքը մեջբերում է ESPN-ը:

«Ինտեր» - «Միլան» պատասխան հանդիպումը տեղի կունենա մայիսի 16-ին եւ կմեկնարկի Երեւանի ժամանակով 23:00-ին:

ԳՈՂԱՑԵԼ ԵՆ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԱՏԱՆԻՆԵՐԸ

Ամերիկացի դերասանուհի, «Էմիլին Փարիզում» հեռուստասերիալի աստղ Լիլի Քոլինզից գողացել են 10 հազար դոլարի զարդեր:

Կողոպուտը տեղի է ունեցել Արեւմտյան Հոլիվուդի հայտնի հյուրանոցներից մեկում: Դերասանուհին գնացել է սպա, եւ այդ ընթացքում կողոպտիչներին հաջողվել է սենյակից 10 հազար դոլար արժողությամբ զարդեր գողանալ: Դրանց թվում էին ադամանդե նշանադրության մատանին, ադամանդներով մատանի եւ էլեկտրոնիկա:

Լիլի Քոլինզը երաժիշտ Ֆիլ Քոլինզի եւ Ջիլ Թեւելմանի դուստրն է: Երբ աղջիկը յոթ տարեկան էր, նրա ծնողները բաժանվել են: Լիլին մոր հետ տեղափոխվել է Լոս Անջելես:

ԵՐԳՉՈՒՀԻ ՍԻԱՆ ԱՄՈՒՍՆԱՑԵԼ Է

47-ամյա ավստրալացի երգչուհի Սիան (իսկական անունը՝ Սիա Քեյթ Իզոբել Ֆերլեր) ամուսնացել է սիրելիի՝ Դեն Բերնադի հետ:

Հրատարակության տվյալներով՝ արարողությունը տեղի է ունեցել Իտալիայում՝ մոդելավորողներ Դոմենիկո Դոլչեին եւ Ստեֆանո Գաբանային պատկանող վիլլայում: Երգչուհու հարսանիքին ներկա է եղել չորս հյուր:

Հայտնի չէ, թե մինչ ամուսնանալը զույգը որքան ժամանակ է միասին եղել: Երգչուհու սիրավեպի մասին հայտնի դարձավ 2021թ.-ին: Այնուհետեւ Սիան ու Դեն Բերնադն առաջին անգամ միասին հայտնվեցին «Վեսթսայդյան պատմություն» ֆիլմի պրեմիերային: Սա երգչուհու առաջին ամուսնությունը չէ. 2014 թվականին աստղն ամուսնացել է ռեժիսոր Էրիկ Անդրես Լանգի հետ, սակայն երկու տարի անց նա ամուսնալուծության հայց է ներկայացրել:

● *Մայիսի 12-ին Խամաճիկների պետական թատրոնում տեղի կունենա ներկայացում՝ «Փոքրիկ Իշխանը»: Տոմսերի արժեքը՝ 1500 դրամ: Սկիզբը՝ 15:00, 17:00:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԱՎԱՆԴՆԵՐ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ որ ավանդները չեն երաշխավորվում:

Ռիտա Մանուկյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ չեն երաշխավորվում այն ավանդները, որոնք՝

ա) պատկանում են բանկի ղեկավարին եւ (կամ) նրա ընտանիքի անդամներին,

բ) պատկանում են տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձին եւ (կամ) նրա ընտանիքի անդամներին,

դ) ճանաչվել են հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց,

ե) սեփականատերը հրաժարվել է իր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,

զ) ներդրվել են ներդրման պահին բանկի սահմանած տոկոսադրույքը առնվազն 1.5 անգամ գերազանցող տոկոսադրույքով:

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները: Ընդ որում, առաջին հերթին հաշվարկվում են ավանդների հիմնական գումարները (ավանդատուի կամ երրորդ անձի կողմից հօգուտ ավանդատուի բանկին տրամադրված կամ բանկում առկա դրամական գումարը, որը ենթակա է վճարման ավանդատուին, ավանդատուի բանկում բացված հաշիվների վրա գտնվող դրամական միջոցները եւ բանկի թողարկած անվանական արժեթղթերով ներգրավված դրամական միջոցները), իսկ երկրորդ հերթին՝ վերը նշված դրամական միջոցների վրա հաշվարկված տոկոսների գումարները:

Հատուցումն իրականացվում է միայն հայկական դրամով: Արտարժութային ավանդների դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձեւավորված միջին փոխարժեքով:

ՎԱՐԿԵՐ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե որոնք են վարկային պատմության ձեւավորման աղբյուրները:

Լիդա Հարությունյան (38 տարեկան, վաճառողուհի)



ՊԱՏԱՍԽԱՆ. Լ. Հարությունյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ վարկային պատմության ձեւավորման աղբյուրներն են ԱՔՌԱ անդամ կազմակերպությունները (բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, հետաձգված վճարումներով գործարքներ իրականացնող կազմակերպությունները, ինչպես նաեւ հանրային տվյալների բազաներից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վարկային բյուրոյին անձանց վերաբերյալ տեղեկություններ տրամադրող պետական մարմինները), որոնք տրամադրում են վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ տեղեկություններ (տվյալներ):

ԱՔՌԱ վարկային բյուրո

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վարկային բյուրոյին կարող են անդամակցել բոլոր ֆինանսական եւ ոչ ֆինանսական կազմակերպությունները, որոնք տրամադրում են վարկեր կամ իրականացնում են հետաձգված վճարումներով գործարքներ, մատուցում են հեռահաղորդակցության, կոմունալ ծառայություններ, ինչպես նաեւ պետական մարմինները, որոնք վարկային բյուրոյին տրամադրում են տվյալներ իրենց կողմից ստեղծված կամ կառավարվող տվյալների բազայից՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ, «Ինտեր»-ի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը հավակնում է «Չեմպիոնների լիգայի» կիսաեզրափակչի լավագույն ֆուտբոլիստի կոչմանը:

ՈՒԵՖԱ-ն ներկայացրել է «Չեմպիոնների լիգայի» կիսաեզրափակչի լավագույն ֆուտբոլիստի կոչմանը հավակնող 4 ֆուտբոլիստների անունները, որոնց թվում է նաեւ Հենրիխ Մխիթարյանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____

Ազգանուն՝ _____

Առաքման հասցե՝ _____

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 5 + 9 +16 + 21
Կոտայքի լեռներ	+ 5 + 8 +17 + 21
Կոտայքի նախալեռներ	+ 10 + 12 +20 + 23
Գեղարքունիք	+ 5 + 8 +17 + 21
Լոռի	+ 6 + 10 +18 + 22
Տավուշ	+ 9 + 12 +23 + 25
Արագածոտնի լեռներ	+ 4 + 7 +17 + 21
Արագածոտնի նախալեռներ	+ 9 + 13 + 21 + 26

Արարատ	+ 13 + 16 +23 + 26
Արմավիր	+ 12 + 15 +26 + 28
Վայոց ձորի լեռներ	+ 4 + 7 +18 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+ 12 + 15 +27 + 29
Սյունիքի հովիտներ	+ 12 + 15 +27 + 28
Սյունիքի նախալեռներ	+ 3 + 6 +17 + 20
Արցախ	+ 11 + 15 +23 + 27
Երեւան	+ 12 + 15 +25 + 27

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.5.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*